

# Լրատու

Թիւ 17  
Հոկտեմբեր 2010

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

## Սիրելի հայրենակիցներ,

Ամառուայ արձակուրդներէն վերադարձին ու դպրոցական վերամուտին ետք, կը հաւատամ, թէ աւանդութիւն դարձած «Լրատու»ի Հոկտեմբերի թիւին կը սպասէք, իմանալու Ներկայացուցիչին եւ Երեսփոխանական Գրասենեակին տարած աշխատանքներուն ու գալիք ծրագիրներուն մասին: «Լրատու»ն աննախընթաց Երեւոյթ մըն է Կիպրահայութեան կեանքին ներս, իր տեղեկատուական ու թափանցիկ բնոյթով, որ եռամսեայ հեզասահ հրատարակութեամբ, ամբողջացնելով չորրորդ տարին, անցաւ հինգերորդ տարուան:

Ինչպէս տեղեակ եք, Յուլիսի մէջ Նարեկ Հայկական Վարժարաններու այս տարուայ շրջանաւարտները այցելեցին Հայաստան, որ իմ տարիներու երազս եր ու խոստում մը, որ իրականացաւ 2010 թուականէն սկզբեալ՝ նուիրուած Նարեկի բոլոր շրջանաւարտներուն անխատիր: «Լրատու»ին մէջ յատուկ գլուխով անդրադարձ կատարուած է այս շրջապտոյտին մասին:

Սեպտեմբերի վերջաւորութեան, Կիպրահայութեան մասին Վաւերագրական ժապաւենը պատրաստող անձնակազմը մէկ շաբթուայ համար մեկնեցաւ Հայաստան՝ Լիբանանէն անցնելով, Նկարահանելու Սփիրօքահայութեան ինքնութիւնը պարփակող՝ Անթիլիասի Կաթողիկոսանիստ համալիրէն ներս գտնուող հարուստ թանգարանն ու գրադարանը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը եւ Նահատակաց Ս. Ստեփանոս մատուռնը: Այս ժապաւենին մէջ իւրայատուկ տեղ գտած է Նաեւ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Հայրական պատ-

գամը: Իսկ Հայաստանի մեջ, անոնք այցելած են ժապաւենի պատրաստութեան համար անհրաժեշտ նկատող պատմամշակութային արժեք Ներկայացնող վայրերը: Յոս կը փափաքիմ իմ անհուն շնորհակալութիւններս յայտնել այս աշխատանքին սիրայօժար օժանդակութիւն տրամադրած Անթիլիասի Կաթողիկոսարանին ու ՀՀ Սփիրոջի Նախարարութեան: Նշեմ, որ այս ժապաւենի պատրաստութեան աշխատանքները շատ լաւ ընթացքի մեջ են եւ պիտի ամբողջանան 2011ի սկիզբը:

Յոկտեմբեր 11ին, Նախաձեռնութեամբ Վրդարադատութեան Նախարարութեան եւ Մարդկային Իրաւունքներու Պաշտպանութեան (Ombudsman) գրասենեակին եւ մասնակցութեամբ Կիպրոսի Երեք Կրօնական Համայնքներու Ներկայացուցիչներուն, Նիկոսիոյ «Քլօրաթրա» պանորկին մեջ, առաւօտեան ժամը 9:00Են ըսկսեալ տեղի պիտի ունենայ խորհրդաժողով մը «Փոքրամասնութիւններուն ներդրումը, իրաւունքները եւ պահպանութիւնը Կիպրոսի մեջ» Նիւթով: Այս խորհրդաժողովը տեղի կ'ունենայ Եւրոպական Սիութեան «Այլազանութիւնը Խորականութեան դեմ» ծրագիրի շրջագիծն ներս: Հրաւիրուած են Ներկայ գտնուելու Երեք համայնքներուն պատկան մարմիններու ու կազմակերպութիւնները եւ բոլոր անոնք, որոնք հետաքրքրուած են այս թեմայով: Կեսօրէ ետք ժամը 3:00Են սկսեալ, տեղի պիտի ունենայ գեղարուեստական յայտագիր, որու ընթացքին մաս պիտի առնե Համազգայինի «Սիփան» պարախումը:

Յոկտեմբեր 14ին, Եռօրեայ պաշտօնական մակարդակի այցելութեամբ, Կիպրոս պիտի ժամանէ ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Պրև. Յովիկ Աբրահամեան: Այս այցելութեան մասրամասնութիւնները պիտի տեղե-

կացնենք «Լրատու»ի յաջորդ թիւով:

Խօսքիս Վերջաւորութեան կը փափաքիմ յիշեցնել, թէ Չաբաթ, 20 Նոյեմբերի Երեկոյեան ժամը 7:00ին եւ Կիրակի, 21 Նոյեմբերի Երեկոյեան ժամը 6:00ին, Ստրովոլոսի Զաղաքապետարանի սրահեն Ներս տեղի պիտի ունենայ Կիպրոսի Ասկախութեան 50ամեակին նուիրած համերգը, մասնակցութեամբ հայրենի յօրինող Արա Գեղրգեանին ու իր նուազախումբին, գործակցութեամբ Կիպրոսի Սիմֆոնիկ նուազախումբին, որու ընթացքին Ելոյթ պիտի ունենան նաեւ Յամազգայինի «Սիփան» պարախումբը եւ Յայաստանեն յատկապես հրաւիրուած պարուիիներ: Չաբաթ օրուայ Ելոյթը, իրենց Ներկայութեամբ պիտի պատուեն Կիպրոսի Յանրապետութեան Նախագահ Ն.Վ. Տիմիթրիս Խրիստոֆիան: Յոյսով Ենք, որ պիտի քաջալերեք այս իւրայատուկ ձեռնարկը, որուն մուտքի տոմսերը արդեն իսկ հրապարակ վրայ են եւ կրնաք ապահովել Երեսփոխանական Գրասենեակեն: Նշեմ, թէ տեղերը սահմանափակ են:

Յաջողութիւն կը մաղթեմ բոլորիդ ու կը սպասեմ, որ խուռներամ Ներկայութեամբ եւ միասնաբար Նշենք մեր սիրելի Կիպրոսի 50ամեակը, մաղթելով, որ մօտ ատենեն կը շրջանցէ Ներկայիս տիրող դժուար ու բարդ քաղաքական պայմանները՝ կերտելով փայլուն ապագայ մը:

**Վարդգես Մահտեսեան  
Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌՎԱՄՍԵՎՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Օգոստոս ամսուայ արձակուրդներու կարճ դադարէ մը ետք, մեր գրասենեակի աշխատանքները կանոնաւոր կերպով վերսկսած են: Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին (Aliens & Immigration Unit) հետ կապուած հարցերը տակաւին դանդաղ ձեւով կ'ընթանան, սակայն ըստ մեզի հասած տեղեկութիւններուն, բոլոր թղթածրարները այժմ կը գտնուին նորակառոյց շենքերուն մէջ: Կեցութեան (Temporary Residence Permits) հրամաններու առաջումը կը կատարուի դիմումներուն մէջ վեց ամսուայ ընթացքին եւ յոյսով ենք, որ ապագային այս գործընթացը աւելի կարճ կը տեւէ:

Իսկ եթէ անհատ մը, կարեւոր պատճառի մը համար, կարիքը ունի ճամբորդելու եւ տակաւին չէ ստացած իր Կեցութեան հրամանը, Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին մօտ կրնայ դիմել լրացնելով յատուկ դիմումնագիր մը, տալով փաստացի պատճառը, անոր կցելով կեցութեան նորոգութեան դիմումին ստացականը եւ €10.26 դրոշմաթուլք, որու իբրեւ արդիւնք տեղույն վրայ կը ստանայ մէկ անգամուայ համար ի զօրու ելեւմուտքի հրաման (Re-entry visa):

### **Նարեկ Հայկական Վարժարաններու 2010 թուականի շղանաւարտներու պատմական այցը Հայաստան**

Այս տարուայ Նարեկ Հայկական Վարժարաններու շրջանաւարտները՝ թիւով տասը, ընկերակցութեամբ երկու ուսուցչուհիներու, 9-23 Յուլիս 2010ին այցելեցին Հայաստան: Ինչպէս տեղեակ էք, այս նախաձեռնութիւնը Պրև. Մահտեսեանի նուերն էր բոլոր շրջանաւարտներուն, որոնք երկու շաբթօւայ համար վայելեցին մեր գե-



ղատեսիլ հայրենիքին տեսարժան ու պատմական վայրերը, շփում ունեցան իրենց տարեկից պատանիներուն հետ նոյն տան մեջ ապրելով եւ այս ձեռով մասնակցած եղան համահայկական բնոյթ ունեցող ՀՀ Սփիլոքի Նախարարութեան «Արի Տուն» ծրագիրին:

Ըսդհանուր առմամբ, մասնակցող աշակերտներուն մեծամասնութիւնը շատ գոհ մնացած էր այս շրջապտոյտեն եւ իրենց վերադարձին, յատուկ երախտագիտութիւն յայտնեցին Պր. Մահտեսեանին, ընդգծելով, որ իրենց պատանի տարիքին արիթը ունեցան այցելելու Հայաստան: Մի քանի աշակերտներ, նոր միջավայրին ընտելանալու դժուարութիւններ ունեցած էին եւ ծրագիրը չամբողջացուցած վերադարձեր էին:

Ըստ ընկերացող ուսուցչուհիներուն մեզի փոխանցած տեղեկութիւններուն, ծրագրուած պտոյտները եւ Սփիլոքի Նախարարութեան տրամադրած ներդրումը այս ծրագիրի յաջողութեան համար քաջալերական էր եւ շնորհաւորելի:

**Լոնտոնի մեջ ճաշկերոյթ՝ ի պատիւ  
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչին**



Լոնտոնի Յայ Երիտասարդաց Ընկերակցութիւնը (AYA), օգտուելով Պրո. Մահտեսեանի ամառուայ արձակուրդին Լոնտոն գտնուելու առիթէն, մեծարանքի երեկոյ մը կազմակերպեց՝ ի պատիւ Յայ Երիտասարդաց Ընկերակցութեան ֆուլքաղոլի նախկին անդամ եւ այժմու Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրո. Վարդգէս Մահտեսեանին, որուն Ներկայ գտնուեցան Լոնտոնի Յայր Սուլր Վահան Յովհաննեսեան, S. Ծնորիք Քիլյ. Պաղտասարեան, իին ու նոր անդամներ եւ բարեկամներ, ինչպէս նաեւ Լոնտոնաբնակ մեծ թիւով ազգայիններ:

**Պետական-պաշտօնական  
մակարդակի հանդիպումներ**

Երկուշաբթի, 13 Սեպտեմբեր 2010ին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը Նիկոսիոյ «Հիլթըն»

պանդոկին մեջ, հանդիպում մը ունեցաւ Ելրոպայի Յեղային խորականութեան Յանձնաժողովի (ECRI) պատուիրակութեան հետ, որոնք վերջին անգամ Կիպրոս այցելած էին 2005 թուականին: Այս հանդիպումին ընթացքին, Պրև. Մահտեսեան անոնց մանրամասնութեամբ Ներկայացուց Պետական Ներկայացուցիչին դիմագրաւած դժուարութիւնները, որոնք կապ ունին Կիպրոսի սահմանադրութեամբ՝ Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներուն սահմանափակ իրաւասութիւններուն գծով, ինչպես նաև Կիպրահայ գաղութի Երիտասարդ անդամներուն առջեւ ցցուած խնդիրները, որոնք ընդհանրապես յառաջ կու գան յունարեն լեզւին ոչ գերազանցօրէն տիրապետելուն պատճառով: Ան նաև այս պատուիրակութեան Ներկայացուց Մակարավանքի լքուած Ներկայ իրավիճակը եւ փլուզումի Ենթակայ կացութիւնը:

Հինգշաբթի, 16 Սեպտեմբեր 2010ին, Պետական Ներկայացուցիչի գրասենեակին մեջ, Պրև. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Յանրապետութեան մօտ Պելճիքայի դեսպան Պրև. Կի Սելիխի: Անոնք զրուցեցին Կիպրոսի Ներկայ քաղաքական իրադարձութիւններուն եւ Կիպրահայ Յամայնքին հետ առնչուող հարցերուն մասին:

Ուրբաթ, 24 Սեպտեմբեր 2010ին, Կիպրոսի երեք Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչները, տեսակցութիւն մը ունեցան Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Պրև. Մարիոս Կարոյեանին հետ: Այս տեսակցութեան հիմնական նիւթը էր բարելաւել Կիպրոսի Մահմանադրութեամբ ընդունուած, Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներուն հանգամանքն ու իրաւասութիւնները:

Երկուշաբթի, 27 Սեպտեմբեր 2010ին, Կիպրահայ Յա-

մայնքի Պետական Ներկայացուցիչը իր գոասենեակին մէջ, հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան մօտ Ֆրանսայի դեսպան Պրն. Ժան-Մարգ Շիվի հետ, միասնաբար շօշափելով Կիպրոսի քաղաքական ընթացքին Եւ Կիպրահայ Համայնքին հետ կապուած խնդիրները:

Քինգշաբթի, 30 Սեպտեմբեր 2010ին, Պրն. Մահտեսան տեսակցութիւն մը ունեցաւ ՀՀ Արտակարգ Եւ Լիազօր Դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանին հետ, որ Կիպրոս ժամանած էր երկօրեայ պետական մակարդակի հրաւերով, Ներկայ գտնուելու Կիպրոսի Անկախութեան 50ամեակի տարեղարձի հանդիսութիւններուն:

### **Զեռնարկներու Ներկայութիւն**

Ուրբաթ, 17 Սեպտեմբեր 2010ին, Տէր Եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան, յատկապէս հրաւիրուելով, Ներկայ գտնուեցան ՀՕՍՀ Կիպրոսի «Սոսէ» մասնաճիւղի կազմակերպած ՀՕՍՀ հարիւրամեակին նուիրուած համերգին, կատարողութեամբ արուեստագէտ Պետելեան ամոլին, որ տեղի ունեցաւ Նախագահական Պալատի ամֆիթատրոնին մէց:

Կիրակի, 26 Սեպտեմբեր 2010ին, Տէր Եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան, Ներկայ գտնուեցան Լիմասոլի Ս. Գեղորգ Եկեղեցւոյ անուանակոչութեան առթիւ մատուցուած Ս. Պատարագին:

### **Ծնորհաւորագիր**

21 Սեպտեմբեր 2010ին, Յայաստանի Հանրապետութեան Անկախութեան Տօնին ուրախ առիթով, Պետական Ներկայացուցիչը նամակ մը յիեց ՀՀ Յունաստանի Եւ Կիպրոսի Արտակարգ Եւ Լիազօր դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանին, իր ու Կիպրահայ գաղութիւն անունով

շնորհաւորելով Դեսպանն ու Դեսպանատան անձնակազմը: Ան իր գիրին մեջ նշեց, թէ Հայաստան ու Սփյուռք, իրարու թիկունք կանգնելով պիտի կարենան շրջանցել Ներկայիս տիրող քաղաքական ու տնտեսական դժուարութիւնները եւ կերտել փայլուն ապագայ մը բոլորիս համար:

### **Յաւակցագիր**

Չորեքշաբթի, 7 Յուլիս 2010ին, Պետական Ներկայացուցիչը իր ու Կիպրահայ գաղութին անունով, ցաւակցագիր մը յղեց Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, անոր հօր մահուան տիսուր առիթով:



## **Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան ՕրԵնքՆերուն**

**Օտարահպատակներու եւ  
Ներգաղթի Բաժանմունք**

**Նորոգութիւն՝ Կիպրոս Կեցութեան Հրամանի  
Կիպրացի կնոջ կամ ամուսնոյն Յօրն ու Մօր**

**Residence Permit renewal of a  
Mother or Father-in-law of a Cypriot**

Ստորեւ կը նշենք այս բոլոր անհրաժեշտ պայմանները, որոնք պետք է ամբողջացնին ու համապատասխան փաստաթուղթերով կցուին M61 դիմումագիրին, նորոգելու համար Կիպրոս օրինաւոր ծեւով պահելու Կիպրացի հպատակի մը կնոջ կամ ամուսնոյն հայրն ու մայրը:

- Նուազագոյնը երկու տարուայ ի գօրու անցագիր եւ պատճենը
  - Զաւակին անցագիրը եւ պատճենը առաւել՝ Կիպրոս կեցութեան հրամանը
    - Կիպրացի կնոջ կամ ամուսնոյն անցագիրը կամ հնքնութեան թուղթը եւ պատճենը
      - Ընտանեկան կապը հաստատող փաստաթուղթ՝ երրորդ երկրի քաղաքացիին եւ Կիպրացի հպատակի մը կնոջ կամ ամուսնոյն միջեւ, որ պետք է թարգմանուած

ըլլայ յունարենի կամ անգլերենի եւ պատճենը: Այս մեկը կը Վերաբերի Ծննդեան վկայականին, որու մեջ յիշուած կ'ըլլան հօրն ու մօր անունն ու մականունը

- Ամուսնութեան վկայագիրի թարգմանութիւնը (Եթէ Կիպրոս չէ կատարուած պսակը) եւ պատճենը

- Նամակ Կիպրացի կնոշ կամ ամուսնոյն կողմէ, որ կը հաստատէ Կիպրոսի մեջ բնակութեան վայրը Երրորդ Երկրի քաղաքացիին, որուն մեջ կը յիշուի նաեւ Կիպրացի հպատակին պատրաստակամութիւնը հոգալու բոլոր այլեւայլ ծախսերը, որոնք կրնան բիսիլ անոր Կիպրոս կեցութեան ընթացքին

- Չոյզին Ընկերային Ապահովագրութեան (Social Insurance) հաստատագիրը, շահ այլ Եկամուտներէ (Եթէ գոյութիւն ուսին), ինչպէս նաեւ խնայողութեան տետրակին պատճենը

- Բժշկական ապահովագրութեան համաձայնագիրը (inpatient / outpatient / transfer of the corps) եւ պատճենը

- Ոստիկանութեան հաստատագիրին բնօրինակը (original police clearance)

- Երրորդ Երկրի քաղաքացիին Եկամուտին փաստաթուղթերը, եթէ առկայ Է. օրինակ՝ թոշակ, վարձք կամ դրամատան հաշիլ

- Բժշկական ընսութիւններու հաստատագիրներ Hepatitis B and C, Aids, Syphilis and Tuberculosis

- 1 լուսանկար

- € 34.17

Բոլոր պահանջուած փաստաթուղթերը, որոնք կ'ապահովուին ոչ-Եւրոպական Միութեան անդամ Երկիրներէ, պետք է հաստատուած ըլլան թէ՝ Apostille կնիքով եւ թէ այդ Երկրին Արտաքին Գործոց Նախարարութենեն եւ Կիպրոսի Դեսպանատունեն:

## **Ուշադրութիւն / Կարեւոր Ազդ**

Կիպրոսի մեջ գիտուրական ծառայութեան կոչուած երիտասարդներուն ու անոնց ծնողներուն պարտք կը զգանք տեղեկացնելու, որ եթէ կը փափաքին շարունակել ստանալ տարեկան Զաւակի Յատկացումը (Էպիծոմա Տέκνոս), անմիջապես պէտք է տեղեակ պահեն Տնտեսական Նախարարութեան Օժանդակութեանց Բաժանմունքը կամ Քաղաքայիններու Սպասարկութեան Կեդրոնները (Կένտրա Էչսպորտետոց տου Πολίτη), մինչեւ Յոկտեմբեր 2010 ամսուայ վերջաւորութիւնը, զօրանցեն առնուած հաստատագիրին կցելով մօր Ինքնութեան Թուղթին (I.D.) պատճենը, այլապես կը դադրին ստանալէ այս յատկացումը: Նոյն ձեւով, երբ ամբողջացնեն գիտուրական ծառայութիւնը եւ ուսումի մեկնին կամ Կիպրոսէ ներս ուսանին, դարձեալ պէտք է տեղեակ պահեն վերեւ նշուած բաժանմունքը կամ կեդրոնները, որպեսզի յատկացումը շարունակուի մինչեւ 25 տարիքը (տղոց համար):

## **ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

### **Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

### **Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy